## ՄԱՐԴ ԴՈՒ...

Ցորեն պէտք է ուտես քանի՞ հազար գրի՝
Որ հասուննաս, գերեզմանին ըլլաս կեր ...
Պէտք է մըղես ո՞րքան դաժան, բուռըն կռիւ՝
Որ նոյն հուսկ հանգստացնէ սիրտըդ ծեր ...:

Ոսկի, արծաթ, պէտք է խըլես դուն ո՞րքան
Քու նըմանէդ, զայն նզմելով անգթաբար՝
Որպէսզի օր մը կարենաս ձեռնունայն
Երթալ պառկիլ է՛ն աղքատին հաւասար ...:

Եւ վերջապէս, Մարդ դո՛ւ, ո՞րքան պէտք է դեռ
Ըզքեզ այրէ տենչանք ու սէր ու նախանձ,
Մինչեւ որ հուրքըդ անցընեն բիւր որդեր ...:

Մերթ ալ ո՞րքան, կիրքով մը մեծ ու անանց,
Պէտք է քաղես դուն գիտութիւն աշխարհէս,
Ու միայն զա՛յն հետըդ տանի՛ս ու քաղես ...:

1943 ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ